

ւածով թոցնում է հաւի զլուխը, Նոյնը փորձում են նաև թագաւորի երիտասարդ բարեկամները: Այս սովորութիւնը, սակայն, հետզհետէ վերաւնում է: Հաւազլուխից յետոյ քահանան « թագաւոր գոլով » շարականը երգելով՝ տան դռնից ներս է մտնում, նրան հետևում են թագաւորը, հարսը և խաչողբայրը, ապա հարսնեղբեքը: Թագաւորն ու խաչողբայրը գնում, կանգնում են « փարդի » առաջ, իսկ հարսը գնում է իր բաժանմունքը: Այս միջոցին սազ ու դափք հնչում է աւելի ուժգին և երիտասարդները, ջահէլ աղջիկներն ու հարսներն ուրախ սրամաղրութեան ներքոյ՝ սկսում են երգել և պարել: Թագաւորի հարն իսկոյն մի մարզ է ուղարկում զիւրի տները և բոլոր զիւղակառններին ճաշի հրաւիրում: Կարծ միջոցում հուաքում են և անմիջապէս, նստի տղամարդիկ և ապա կանայք, ապագութեան կարգով, երկար ու նեղ սփռոցնեւրով ծածկւած յատակի վրայ, միմեանց հանդէպ, ծալպատիկ նստում են. քահանան օրհնում է սեղանը և բոլորն էլ սկսում են ճաշի: Սովորաբար մատուցանում են եախի և փլաւ: Ճաշից յետոյ մինչև երեկոյ ֆէֆ են անում և ապա ցրում:

Այրիի նշանադրութիւնն ու պսակադրութիւնը. — Այրի կինը չի վերադառնում հօրանց տունը, այլ մտու է սկեսրանց տանը, իսկ եթէ ցանկանում է կրկին ամուսնանալ՝ զարտնի խօսք է տալիս իր սիրածին և նրանից մի մատանի է վերցնում, որով նշանադրութիւնը կատարւած է համարում: Այնուհետև սիրածը պաշտօնապէս խնդրում է նրա ձեռքը սկեսուրիցն կամ սկեսորայրիցը: Համաձայնութիւնն ստանալուց յետոյ, մի որոշեալ գիշեր, եկեղեցում կատարում է պսակը, որ լինում է շատ պարզ, առանց սազ ու դափի:

Վիեննա ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ
(Շարումակելի)

Բարոյն մէջ համախոնութիւնը կը բազմացնէ սէրն ու զօրութիւնը. իսկ համակրութիւնը՝ գութն ու օգնութիւնը, որ մեծ և կարևոր ողորմութիւն մ'է:

ԱՄԵՆԱՆ

Երբ անձ մը կը տառապի ֆիզիքական կամ բարոյական ցաւով՝ դեռ մի տար իրեն օգնութիւն և ոչ քաջալիբական խօսք մ'ըջէ. ամէն բանէ առաջ տուր կարեկից հայեացք մը:

ՅԻՐ. ՄԵՐՍԵՒ

**ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՆՈՒԳԻՐՔ
Ս. ՂԱԶԱՐՈՒՅ ԿԱՆԲԻՆ**

(Շար. տես Բազմավէպ, 1924 էջ 302)

ԻԶ.

ՄՈՐՂԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՊՈՒՍԱՅԼԻՆՑ

Տրամաբական գրութիւններ պարունակող ձեռագրի մը սկիզբը կը գտնուի այս Մարդակազմութիւնը, որ անգամ մը նիւթ եղած է ինձ 817 թուահամար Ձեռագրին ուսումնասիրութեանս մէջ:

Ամբողջ ձեռագիրը փայտեայ կողբերով կաշէկազմ ըլլալով, հազիւ ունի 10 հարիւրդամեղր մեծութիւն՝ 8 հարիւրդամեղր լայնութեամբ և Յ, Ծ հարիւրդամեղր թանձրութեամբ, որուն թուահամարն է՝ 276:

Գիրը ամբողջ նոտը է, միասին, թուրք բարձրակեայ, հանգամանքը լաւ:

Ձեռագիրն Պաշպալովէ Ս. Ղազար բերած է Հ. Միքայէլ Վ. Չամչեան 1790ին. և նուիրած է զայն Պաշպալովցի Յովհաննէս Ջիզիեան անուն անձը, որ 1768 էջին վրայ անտաշ գրերով իւր Յիշատակութիւնը կ'արձանագրէ այսպէս.

« Յիշատակ է Յովսէփեան ՈՂ, ԱՂ, « Միկրտիչի Ջիզիեան, ի վաճառ Սրբոյն « Ղազարու որ ի վիճակիկ ձեռամբ, Հ. « Միքայէլ վարդապետի Չամչեան. Յամի « Տեսան 1790, Ապրիլի 4-ին ի Պաշ- « վալով:

*

Յայտնի չէ թէ երբ և ո՛ւր ընդօրինակուած է ձեռագիրն. բայց ամենայն հաւանականութեամբ, 18րդ դարու սկիզբներն եղած ըլլալու է այն. սեղ մը կը կարդացուի թէ ընդօրինակիչը եղած է ոմն ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻՉ, զոր շփոթելու չէ համանուն նուիրատուն հետ:

Մարդակազմութիւնը կը գրուէ ձեռագրին սկզբնական ՅՏ էջերը՝ 29 թերթերով:

Ապուսայիդի մարդակազմութեան համառոտութիւնն է այս սակայն, հազիւ թէ 18 զլուխի բաժնուած, որուն ցանկն է հետեւեալը.

- Վասն ստեղծման գիւղոյն և շրջիկն Ա.
- Վասն շինուածոյ ախոցն Բ.
- Վասն ստեղծման ակահչացն Գ.
- Վասն ստեղծման քրիկն Դ.
- Վասն ստեղծման բերանոյն Ե.
- Վասն ստեղծման սրտին Զ.
- Վասն ստեղծման բորոցն Է.
- Վասն ստեղծման իրդիկն Ը.
- Վասն ստեղծման փայծոյրն Թ.
- Վասն ստեղծման կրիկամացն Ճ.
- Վասն ստեղծման յեղոյն ԺԱ.
- Վասն ստեղծման արևացն ԺԲ.
- Վասն ստեղծման փաղաքըտիկն ԺԳ.
- Վասն ստեղծման կրկու ոտից ԺԴ.
- Վասն ստեղծման ստամոքսի ԺԵ.
- Վասն ստեղծման յաշրկնվածոյ ԺԶ.
- Վասն ստեղծման է. ակզմոցն ԺԷ.
- Վասն ստեղծման ծածուկ բնութեան մարտչոյն. ԺԸ.

Սոյն ցուցակը ճիշդ չի համապատասխաներ պարունակութեան, ուր կը գտնենք ետև կամ առաջ գրուած գլուխներ, մանաւանդ սխալ ընդօրինակուած շատ բառեր ու պարբերութիւններ, որոնք գրուածը գրելի է անհասկնալի կ'ընեն երբեմն:

Ի է.

ՄԱՐԿԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՊՈՒՍԱՅԻԴԻ

Դիտարդ մարդակազմութեան յար և նըման է սա, որ գետեղուած է Միքայէլ Ասորիի ժամանակագրութիւնը և այլ կրօնական գրուածներ պարունակող ձեռագրի մը մէջ և կը գրուէ անոր 289 - 312 էջերը:

11 հարիւրորդամեղը մեծութիւն, 9 հարիւրորդամեղը լայնութիւն և 5 հարիւ-

րորդամեղը թանձրութիւն ունեցող հատորիկ մ'է այս ձեռագիրը և կը կրէ 1326 թուահամարը:

Կաշէկազմ է. թուղթը հաստ բամբակեայ, գիրը նոսր և բնթեանլի, գոր ընդօրինակած է ՄԵՍՐՈՊ ԳՐԻՁ 1671 թուին, ինչպէս կը յայտնէ ձեռագրին վախճանն եղած յիշատակարանը որ է՝

- « Թիւ արամեան հազար յոնգի (1000)
- « Հարիւր քսան եմին դասի (1 - 120 = 1120 + 551 = 1671
- « Յամեսանն Յունաց Նոյնիսիւրի.
- « Մրիցա տեղրեակս քսանակ հնգի:
- « Չեսամբ մետրոյ ակպտանի,
- « Սակս իւնդրոյ հարագատի,
- « Որչեալ՝ անուամբ տեսն յովսէփի,
- « Հարագատի հոգար ձեօղի »:

*

Ապուսայիդի Մարդակազմութեան այս օրինակը նորութիւն չի ներկայացներ և կարեւոր է այն՝ միայն իւր Յիշատակարանովը, որ կը յայտնէ նոր թուական մը 1671:

Վերև տեսանք արդէն թէ Ապուսայիդի Մարդակազմութեան օրինակ մը գրուած էր ՊՕՂԱՍ ՏԻՎՐԵԿՅԵՆ 1625ին, և հատ մ'ալ ԱՍՏՈՒԿԱՅՏՈՒԻ ԵՐԵՑԷՆ 1688ին. ՄԵՍՐՈՊ ԳՐԻՁԻՆ 1671ին այս արտագրածովը, ուրեմն 17րդ դարու մէջ իրարմէ թիչ ժամանակներով հեռու երեք օրինակ մէջտեղ բերուած է, ինչ որ ապացոյց է թերևս, թէ անի կարևորութիւն ստացած գործ մ'էր, և զայն կորուստէ փրկելու համար՝ հոս ու հոն՝ փութացին բազմացնել անոր օրինակները:

*

Ս. Ղազարի այս ձեռագիրն յետոյ սեպականութիւն եղած է ՅՈՎՀԱՆՆԷՍ անուն ֆահանայի մը, որուն համար Հասորին

1. կարգաւ յորէւա կամ յորէրէեալ:

վերջը գրուած է, թէ « Քահանայ օրհնուած է ՌՄԺԵԻՆ » (1215 551 = 1766):

ԻՐ.

ՅԱՂԱԳՄ ԱԿԱՆՑ ԵՒ ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՊՈՒՍԱՑԻԿՍՑ

Պատուական քարերու յատկութիւնները և անոնց բուժական կամ ախտաբանիչ ազդեցութիւնները մեկնարանող գրուածք մ'է, և ասոր հետ Ապուուայիդի մարդակազմութենէն օրինակ մը պարունակող ձեռագիր մ'է. զբնույժ մ'է սա՛ն անթուական, որ սակայն յայտնի է թէ 18րդ դարու ընթրօրինակութիւն մ'է:

Ս. Ղազարու վանքը բերուած է այն՝ 1836 յուլիս 22ին, և կը կրէ 801 թուահամարը:

Նորագոյն կազմով լաւ պահուած է ձեռագիրս, ունի 17 հարիւրորդամեղ մեծութիւն, 12 հարիւրորդամեղ լայնութիւն, և 8 հազարորդամեղ թանձրութիւն:

Թուղթը հաստ է և բամբակեայ. ունի 37 թերթ և 74 էջ գրութիւն, որուն 385ը Ականց կը վերաբերի և 36ը Մարդակազմութեան, առանց որ և է յիշատակութեան տեղւոյ կամ գրիչի:

*

Սակայն ԱԿԱՆՑ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ վրայ գրուածը աչքէ անցուցած ժամանակ կը հանդիպինք փերիարեակ ՍԱՐԳԻՍ քահանայի մը անունին, զոր ձեռագրին անյայտ իմրագիրը կը յիշատակէ իբրև Հեղինակ այս հաւաքածոյին առաջին մասին և կը գրէ սապէս.

« Զայսուսիկ բանքս, որք վասն ականց « են, զորս և անաստիկ գրեցար այժմոս « ժամանակիս, ժամանեալ ոմն ՔԱՀԱՆԱՑ « ՍԱՐԳԻՍ անուամբ ազգոս հայ, հմուտ և « տեղեակ բանից գրոց, որ յեակիր ի քս. « դարն Բեդիայ, որ է հայապս: Էջ էր կարի « վարժ ի լիզուն արապի և օսմանցոյ, և « ֆասակի: Այլ և ծանօթ յունաց լեզուիս,

« և էր ինքն արուեստագործ ականց պս. « ստականաց, ակունսն հարքի և յիև. այլ « և զնոյ և վսձառոյ սոցին: Էջ էր և ի « զնայն մեր յԵրուսղեմ, յորժամ հասար « ի Հոյսայ, պատահեցար յայսմիկ Սարգիս « քանանայի, որ ի կարգս զոյց հանապազ « իօտէր ընդ մեզ զորպիսութեան ականց, « և բանք նորս իրք հասաստի բուխով ի « միտս մեր, աղաչեցար զնս, թէ զայդուիկ՝ « զոր բանիս ասես, գրով շարադրեալ տոտր « մեզ վասն օրինակի: Էջ ես վասն մեղոյ « ինկրոյ գրեալ ես: Էջ մեք վասն հա. « սարակաց օգտի ի մէջ այս պատմագրիս « շարակարգեալ գրեցար: Նսիս զի մեր է « ինկրեալ, և երկրորդ, զի նարագիտու է « բանս, և ի մէջ պատահողաց ինկրեմք « եախ մի՛ առնել մեզ քանանանս, և եր. « թորք ասել Աստուած որդումի Տեսան Սարգ. « սին այնմ, և զմեզ ասմեր և մէք և ձեզ « ամեն: Իսկ որք զկեր գրեալ բանքս են, « որ վասն ականց, յառաջնոց ամանակաց « կայր օրինակն, զայն ևս ի սոյն կարգ « դասակոյ գրեցար վասն օգտի ընթրցողաց « ի փոսս Աստուծոյ »:

*

Յիշատակարանէս դերին է իմանալ, որ այս Ականց գիրքին մէջ մասը՝ որ է կայծ, Սարգիսն, Զմրուիթ, Յասպիս, Ական, Ամերիօստոս, Ոսկերար, Բիւրեղ, Մարգարիտ, Բուստ, Օճիթար, Էմանելի, Էսաք, Միկատիս, մինչև Փերոզա, Սարգիս քահանային գործն է. իսկ Յնացեալը՝ աւելի հին ժամանակի հեղինակներու մտածութիւն:

Հոս աւելորդ չըլլայ թերեւս յիշել, թէ մեր բոլոր բժշկարաններու մէջ կը գտնուին Պատուական Ականց յատկութիւններուն նուիրուած զլուխներ, բոլորն ալ իբարու համանման. բայց այս նիւթին վրայ ճառող ամենընտիր գրուածը զոր ունինք՝ է ՊԱԱՏՏԵՑԻ ԳԵՈՐԳ բազմապատակ անուանի զպիրին 1778-1779 Դեկտեմբերին Պարսկերէնէ թարգմանածը, որ տպագրուած է Կ. Պոլիս 1807ին. և կը կրէ՝

« Գիրք մեծագին և դաստասկան տկանց
 « և այրոց պեսպես հսկրական և կենդանա-
 « կան քարանց ևսևս եօրանց հրահայտիւոց
 « և զանազան ազնուազոյն իրոց »

վերնագիրը: Ռուսական ընդարձակ գործ մ'է. կը խօսի մանրամասն պատուական կոչուած բոլոր քարերու յատկութիւննե-րուն և ազդեցութիւններուն վրայ, և ունի նաև վերջը բառացուցակ մը, յորում նա կը դնէ զիրքին մէջ գործածուած բոլոր բառերը, անոնց հանդէպ զրեւով՝ որոշ ու մեկին բացատրութիւններ:

Նաևանդ շատ ալ աղքատ՝ նկարագրութեան ու բացատրութեան տեսակէտով:

Յայտնի չէ նաև, թէ անանուն խմբագիրը որ հեղինակներէն քաղած է այս բոլորը, որ կ'աւարտի 38րդ էջին վրայ, որուն անմիջապէս յաջորդին վրայ կը սկսի Ապոստոլի Մարդկագիտութիւնը մեծապէս համոտուած և նօտրագիր խոշոր գրերով 18 թերթերու մէջ ամփոփուած, որու մասին աւելի խօսելու հարկ չեմ տեսներ, քանի որ արդէն սոյն մարդա-կազմութեան երեք ուրիշ օրինակները բա-ւական խօսեցուցին մեզ:

ՏՅԹ. ՎԱՆԱՄ Յ. ԹՈՐՈՍԱՆԱ

Զեռագրին դառնալով՝ կը տեսնենք որ իր պարունակած քարերը շատ քիչ են Գէորգ Պալատեցիին ցուցադրածներէն, մա-

Վենետիկ — Ս. Ղազար

14 Յունուար 1923

(Շարունակելի)

Գ Ր Ա Կ Ա Ն

Պ Ա Յ Ր Ը Ն Ե Ա Ն Ձ Ի Թ Ե Ն Ի Ք

Ի Ս. ՂԱԶԱՐ

Զ ԵՄ նըւագեր յիշատակաց այն բըլուրն
 Ուր մարդն — Աստուած սարսուռներուն տակ դժնէ
 Մահուան, մեղքին զազիր՝ հեծեց, հատաչեց,
 Աստուածային արիւն, արցունք թափելով:
 Մըխիթարայ մեծ դաստակերտը լըտին
 Թող սըլանայ ու թեւածէ ոգիդ վեհ
 Լուս և անհուն խորհուրդներով առլըցուն
 Անդորրանքի, միայնութեան հովտին մէջ.
 Պիտի զըտնես նազելագեղ ափին մօտ
 Բարձրաւանդակ մը փոքրիկ. հոն կ'ամբառնան
 Խաղաղութեան սուրբ ըստուերներ սիգանեմ
 Զորբս տնկեց դիւթուած քերթողը պանդուխտ,
 Այն Լորտ հանճարն որ հաճոյք, ցաւ, միշտ փորձեց,
 Եւ նոյն իսկ օր մ'եղեհունաւոր մարդու պէս
 Մութ զընդանին մէջ փակուեցաւ, յուզումի՝